Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ 4 դաստիարակի՝ 0,56 դրույքաչափով, երաժշտական դաստիարակի 0.75 դրույքաչափով, մեթոդիստի՝ 0,25 դրույքաչափով թափուր պաշտոնները համալրելու համար:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)
2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ
5. ինքնակենսագրություն ՝Ձև 4
6. լուսանկար 3x4չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
10. որակավորման տարակարգ(առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 17 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից - 16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2025 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին, <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքում ,հասցե՝ գ. Առատաշեն , Ա.Այվազյան 34 :

Տեղեկությունների համար զանգահարել 098 149-893 հեռախոսահամարով: